

Գեղամ Մ. Բաղայան

Պատմ. գիյ. թեկնածու

ԿԵՂԻԻ ՍԲ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԻ

1475 Թ. ԿՈՆԴԱԿԸ

**Որպես Հայաստանի պատմական աշխարհագրության
սկզբնաղբյուր***

Բանալի բառեր – Խորձյան, Կեղի (Քղի), Խլբաշի Սուրբ Կարապետ, Առյուծ լեռնագագաթ, Առյուծնախազ լեռնապար, Խուրթուզի, Յոխու, Կոճակ, Հերթն (Հարտիվ), Հանդերձ, Սուրբ Լույս (Սըլպուս) լեռ, Ապար (Առապար), Տարման (Դարման), Հանդերձ (Մեյիքան):

Մուտք

Տարիներ առաջ ամերիկահայ բազմավաստակ գիտնական Ավետիս Սանջյանը «Revue des études Arméniennes» հանդեսի էջերում¹ հրատարակեց պատմական ծովափի Խորձյան (Խորձեն, Խորձին) գավառի հռչակավոր Խլբաշի Սուրբ Կարապետ վանքի 1475 թ. թեմական կոնդակը, որը ստորագրված և կնքված է Ամենայն հայոց կաթողիկոս Արիստակես Բ-ի անունից²: Այն պահվում է ԱՄՆ-ի Կալիֆորնիայի համալսարանական ավանի (campus of the University of California, UCLA) գիտահետազոտական գրադարանի Մերձավոր Արևելքի ֆոնդում, որտեղ հավաքված են դեռ 1968 թ. սպահանցի հայտնի բարերար, դոկտոր Կարո Օվեն Մինայանի կողմից նվիրաբերված տարբեր լեզուներով հազարավոր տպագիր գրքեր, ձեռագիր մատյաններ և արխիվային վավերագրեր:

Գաղտնիք չէ, որ հայկական վանքերի կոնդակներն ունեն աղբյուրագիտական մեծ արժեք, մանավանդ եթե հաշվի առնենք, որ դրանց մեծագույն մասն անբարենպաստ պայմանների հետևանքով ոչնչացվել կամ անհետ կորել է³: Այնուամենայնիվ, մեզ հասած նմանատիպ հատուկենտ

* Հղվածն ընդունվել է տպագրության 01.09.2021:

1 Տես **Sanjian A. K.**, Catholikos Aristakès II's Encyclical of A. D. 1475. "Revue des études Arméniennes", nouvelle série (այսուհետև՝ REArm), tome XVIII, Paris, 1984, էջ 147-171:

2 Իրականում կաթողիկոս Արիստակես Բ-ն աթոռակալել է 1465-1469 թթ.: Մեր նպատակից, սակայն, դուրս է պարզելու այս ժամանակագրական հակասությունը:

3 Պահպանվել են միայն սակավաթիվ կոնդակների բնօրինակներ (բարեբախտաբար հայտնի են նաև մի մասի ընդօրինակությունները): Առավել ամբողջական և լավագույն օրինակը թերևս Տարոնի հռչակավոր Սբ Հովհան-

փաստաթղթերում, որպես կանոն, հանդիպում են հատկապես պատմաաշխարհագրական այնպիսի տեղեկություններ, որոնք բացակայում են մատենագիրների երկերում: Ըստ էության, կոնդակներում զետեղված տվյալները երբեմն լրացնում են այդ բացը: Այս առումով բացառություն չէ նաև վերոհիշյալ վավերագիրը:

Ստորև ներկայացնում ենք Խլբաշի Սբ Կարապետի կոնդակի այն հատվածը, որի հաղորդած տեղեկությունները պատրաստվում ենք քննելու սույն հոդվածում. «Զոր գրեմք ի յանուանի եւ յամէնաւրհնեալ քաղաքդ Կեդի ի Խլպաշի **վանքն** ի սուրբն Կարապետ եւ յիւր վիճակն: Նախ ի յԱպարն, ի յԱստղբերդ, ի Սէրկէվլի, ի Տարման, ի յԱպողնակ, ի յԱւսնակ, ի Սեղանք, ի Ծէրմակ, ի յԱռէքն, ի Ճպրոզեղ, ի Ձուառիճ, ի յԱփխզուտ, ի Ղազի, ի յԱպիկավանք, ի Խուպս, ի Սենեկն, ի յԱղտաղտ, ի Բերդար իգի, ի Հագստուն, ի Ծծուարս, ի յԱպծէք, ի Պայթակն, ի յԱլըրդնիկ, ի Յոխու մինչեւ յԱռիւծնախագ, ի Կոճակ, նախ ի Կտակ, ի Խոպակ, ի Խոլխոլք, ի Հարտիւ, ի յԱգարակ, ի Հանծեիկ, ի Մրուն, ի Հարկապ, ի Խարիկ, ի Պաղին, ի Հանդերձ, ի յԱնառիճ, յԱռինձ, ի Կարմիր եկեղեցիք, ի Խուպ ձոր, ի Խուլմին, ի Խորթոն, ի Շէն, եւ որոց այդոցիկ բնակչացդ ի միասին»⁴: Նշված 45 տեղանուններից 42-ը բնակավայրերի անվանումներ են (այդ թվում՝ Կեդի անվանումը): Ուսումնասիրության ընթացքում պարզվել են նաև առանձին գավառակների անվանումներ, որոնց տեղադրությանը կանդրադառնանք համապատասխան բաժնում:

1. Խորձյան գավառը⁵

Նախքան բուն նյութին անցնելը կցանկանայինք համառոտ ներկայացնել այն բնաշխարհը, որտեղ տասնամյակներ շարունակ մշակութային-լուսավորական գործունեություն է ծավալել այս նշանավոր սրբավայրը, որը գտնվում էր Կեդի (Քդի, պատմ. Կողորբերդ) գյուղաքաղաքից շուրջ 5 կմ հյուսիս, Արածանու Գայլգետ վտակի ձախ ափին՝ երբեմնի Ապար կամ Ապառ (Առապար) բերդաքաղաքին կից, որի անունով այն կոչվել է **Ապարու կամ Առապարու վանք**: Մենաստանը հայտնի էր նաև **Գետահայաց**

նեւի կամ Եղրդուտի վանքի 1445 թ. կոնդակն է (տես **Քաղայան Գ.**, Տարոնի Ս. Հովհաննէսի (Եղրդուտի) վանքի 1445 թվականի կոնդակը (պատմա - աշխարհագրական ակնարկ), «Էջմիածին», Ս. Էջմիածին, 1997, N Ժ, էջ 88-105:

4 REArm, էջ 149: Չայնավորով սկսվող տեղանունների նախասկզբի «յ»-ն (կարդացվում է «ի»), մեր կարծիքով, արտացոլում է տեղական բարբառային արտասանությունը, որը 15-րդ դարում արդեն տարածված էր ժողովրդի մեջ:

5 Հողվածի շարդորման ընթացքում օգտվել ենք հետևյալ տոպոքարտեզներից՝ «Копия турецкой карты Азиатской Турции, изданной в масштабе 1:200 000 в 1330 году Гиджры, т.е. в 1911-12 годах», [Тифлис], 1915-1917, IV-14 (մասշտաբ՝ 1:210 000, այսուհետև՝ ККАТ), Թուրքիայի Հանրապետության 1940-ական թթ. տպված ռազմական քարտեզ, Кігі (մ.՝ 1:200 000), ԽՍՀՄ ՋՈՒ J-37-05: Терджан (մ.՝ 1:200 000):

Սուրբ Նշան կամ **Հանգստունի Սբ Կարապետ** անուններով⁶: Ընդ որում, ժողովրդական ստուգաբանությամբ վանքը Սուրբ Կարապետ է կոչվել Տարոնի համանուն հռչակավոր վանքի յուրատեսակ նմանակը լինելու հետևանքով⁷: Խորձյանը (Խորձեան, մատենագրական երկերում՝ նաև **Խորձին**, **Խորձայն** ևն), որն ուշմիջնադարյան հայերեն ձեռագրերում կենտրոնի անունով կոչվում էր **Կեղի** («Կեղոյ երկիր», այստեղից՝ Բղի)⁸, զբաղեցնում էր Արածանի գետի (Արլ. Եփրատ, այժմ՝ Մուրատ) աջակողմյան նշանավոր Գայլգետ (Կեղի)⁹ վտակի ողջ վերին, մասամբ՝ միջին ավազանը: Ուշագրավ է, որ վերջինս 2 անգամ հիշատակվում է «Աշխարհացոյց»-ում՝ Բարձր Հայքի և Ծոփքի նկարագրություններում (վերջին դեպքում՝ «միս Գայլգետ» ձևով), որպես «սրբազան» Բարձր Հայք աշխարհից (նահանգ) սկզբնավորվող հայոց 4 դրախտարուխ «զօրեղ» գետերից մեկը¹⁰: Խորձյանը/Կեղին հյուսիսից Գայլախագուտ (Պախր, այժմ՝ Bağır Baba) լեռնաշղթայով սահմանակից էր Բարձր Հայքի Եկեղիք (Երզնկա) և Մանանաղի (ուշ միջնադարում՝ Վերին Դերջան) գավառներին, արևելքից Զրվեժի (օտարահունչ՝ Çavres) ու Կոհեր (թրք. Karaboğadağlar) փոքր լեռնապարերով՝ Տուրուբերանին, հարավից Կարակոչանի բլրաշարքով (թրք. Karakoçan)՝ Ծոփքի Բալահովիտ (Բալու) գավառին, իսկ արևմուտքից Սուրբ Լույս պաշտելի լեռնագագաթով՝ Դերսիմի լեռնաշխարհին, որը զբաղեցնում էր պատմական Ծոփքի՝ Արածանուց հյուսիս ընկած հատվածը¹¹: Ըստ Մխիթարյան միաբանության անդամ, նշանավոր պատմաբան և աշխարհագրագետ Ղուկաս Ինժիճյանի՝ 18-րդ դ. վերջին – 19-րդ դ. սկզբին գավառը բաժանված էր Վերին և Ներքին (Վարի) Կեղի հատվածների¹², որոնց սահմանաբաժան գիծը ձգվում էր Հագստունի (թրք. Hakistan Dağlar) և դրա բնական շարունակությունը կազմող Շեյթան (թրք. Şeytan Dağlar. ցավոք, բնիկ անվանումն անհայտ է – Գ. Բ.) լեռնապարերի ջրբաժանով, որոնց կենտրոնական մասում բարձրանում էր պատմական Առյուծ լեռնագագաթը (այժմ՝ Քյոշմեր կամ Քյոշմուր, թրք. Köşmürdağ)¹³: Մեր կարծիքով՝

6 Տե՛ս **Ոսկեան Հ.**, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 215-216:

7 Տե՛ս «Տարեգիրք Ա», հրատարակություն Քղիի հայրենակցական միության, Տիբորյիթ, 1937, էջ 23 (այսուհետև՝ Տարեգիրք): Հմմտ. **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 216:

8 Թրք. աղճատումով Kığ: Ուշագրավ է, որ, ըստ գերմանաբնակ հայտնի իրանագետ, ազգությամբ դմիլի (զազա) Սեսուր Քեսքինի (Mesut Keskin) անձամբ մեզ հաղորդած տվյալի, տեղի դմիլիները գավառը կոչում են Geği:

9 Թուրքերեն հորջորջմամբ Büyüksu - «Մեծ ջուր» (իմս Մեծ գետ - Գ. Բ.): Նույն գետի ստորին հոսանքի հատվածը նոր ժամանակներում կոչվում է **Բերի** կամ **Փերի** (թրք. Perisuyu):

10 Ըստ «Աշխարհացոյց»-ի մյուս 3 գետերն էին Եփրատը (Արևմտյան), Երասխը (Արաքս) և Կոհը (Ճորոխ) (տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացույ» հավելված, "Géographie de Moïse de Corène (d'après Ptolémée)", Texte Arménien, traduit en français par le Arsène Sukry Mékhitariste, Venise, 1881, (այսուհետև՝ «Աշխարհացոյց», հավելված), էջ 30):

11 Տե՛ս "District of Keghi in 1914" քարտեզ (Scale-1:150 000), էջ 16-17, ներդիր, հեղինակ **Գ. Մ. Բաղայան, Յովսէփ Թօրաթ**. Աւերակ Քղին, Ստամբուլ, 2015 (զուգահեռ անգլերեն և թուրքերեն տեքստերով): Հմմտ. «Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի», մասշտաբ 1:2300000, հեղինակ **Բ. Հ. Հարությունյան**, «Հայաստանի ազգային ատլաս», հատ. Բ, Եր., 2008, էջ 30-31:

12 Տե՛ս **Ինժիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առջօին, հատ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1806, էջ 106:

13 Առյուծ լեռան մասին տե՛ս **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն (գրաբար և աշխարհաբար տեքստերով), Եր., 1987, էջ 116/117, 334/335:

հայկական միջավայրում վերոհիշյալ լեռնապարերի ընդհանուր անվանումը եղել է **Առյուծնախագ**, որը հիշատակվում է Սր Կարապետի թեմի կոնդակում¹⁴: Սակայն Կեղին ավելի հայտնի էր իր ուշագրավ ներքին բաժանումով, որը բխում էր գավառի լեռնային ընդելուզքից (ռելիեֆ) և հավանաբար ձևավորվել էր դեռևս հին ժամանակներում: Այլևայլ աղբյուրների տվյալներով՝ գավառը կազմված էր 2 տասնյակի հասնող գավառակներից կամ գյուղախմբերից, որոնք ընկած էին Գայլգետի և դրա ճյուղավորումների ձորահովիտներում՝ ձգվելով հյուսիս-արևելքից հարավ: Դրանք էին՝ **Խուրթուզի** (Խուրդուզի) կամ **Լճիկ** (Լծիկ, Գայլգետի վերին հոսանքի անվանումը), **Խորթի** կամ **Խորդու** (Ներքին), **Հանդրես** կամ **Ընդերես** (< Հանդերձ), **Քղի** (< Կեղի), **Խարաբաշ-դարա** (թրք. Karabaşdere), **Խասեր**, **Հերթև** կամ **Հարտիվ** (Սուրբ Լույս լեռնագանգվածի շրջանը), **Խուբադ** կամ **Խուբադցիք** (Խոբադ, թրք. Kubad), **Կոճակ**, **Գագ** կամ **Կագ**, **Չանախչի**, **Քարեր**, **Սանջախ** (թրք. Sancak) և **Օղջիան** կամ **Աղջիան** (Օխչան): 19-րդ դ. առանձին սկզբնաղբյուրներում Քղիի մասեր են դիտվել նաև **Վերին Խորթին** (Վերին Դերջան), **Չարեքցիքը** (տարածվում էր Սուրբ Լույսից հյուսիս՝ ընդգրկելով Գայլգետի **Վիմախոր** (Ֆեմ) վտակի հովիտը, թրք. Çarekli) և **Գոյնուքը** (< Գինեկ, զբաղեցնում էր Արածանու աջակողմյան Գինեկ օժանդակի հյուսիսային հովիտը՝ գավառից արևելք, թրք. Göynük)¹⁵: Վերոնշյալ տեղանունների շարքում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում **Խուրթուզի**-ն (Խուրդուզի): Մեր կարծիքով՝ այն առաջացել է Խորձյանի **Խորձինք**¹⁶ տարբերակից, որը բխում էր տեղական բարբառից Խորձինս> Խորդունս>(Խորդունս)>Խուրթունգ>Խուրթուզ(ի)-Խուրդուզի անցումով:

Հակիրճ ներկայացնենք Խորձյանի/Կեղիի էթնիկական նկարագիրը: Մինչև ուշ միջնադար վերջինս Արևտյան Հայաստանի գրեթե զուտ հայաբնակ գավառներից էր: Ուշագրավ է, որ 17-րդ դարի հայտնի մատենագիր, ծագումով կեղեցի Հակոբ Կարսեցին Կեղիի մասին նշում է, որ այն եղել է «յոթ շէն», իսկ նրա բնակչությունը՝ «բովանդակ հայք»¹⁷: Ցավոք, այս հայահոծ գավառը խիստ տուժեց 17-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանի բազմաթիվ շրջանները պատուհասած ջալալիների խռովություններից և վայրագություններից, որոնք շարունակվելով նաև հետագա տասնամյակներին, ի վերջո հանգեցրին նրա հայկական նկարա-

14 Մեր կարծիքով Առյուծնախագ ստուգաբանվում է «առյուծնաքար» և որոշակիորեն կապ ունի **Առյուծ** լեռնանվան հետ: «Սագ»-«քար» ստուգաբանությունը տես **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, Եր., 1973, էջ 310:

15 Քղիի գավառակների մասին տես **Колубакин А. М.**, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. I, ч. I, Тифлис, 1888, էջ 302-312, т. III, ч. II, Тифлис, 1890, էջ 9-26, 30-48, Տարեգիրք, էջ 3-7: 19-րդ դ. վերջին Վերին Խորթին և Չարեքցիքը մտել են Էրզրումի վիլայեթի համապատասխանաբար Դերջան և Խուզուջան (Ղուզուջան), իսկ Գոյնուքը (Գինեկ) Բիթլիսի Ճապաղջուր գավառների (թրք. kaza) մեջ:

16 Քղիի բարբառի (կամ ենթաբարբառի) մասին տես **Սրապետան Լ.**, Քղի (տեղագրական եւ ազգագրական), Անթիլիաս, 1960:

17 Տես «Մանր ժամանակագրություններ: XIII- XVIII դդ.», հատ. II, կազմեց **ՎՊ ԱՊ Հակոբյան**, Եր., 1951, էջ 246:

գրի զգալի աղճատմանը: Ուստի պատահական չէ, որ 19-րդ դարի 70-ական թթթ, երբ մեզ են հասել գավառի բնակչության թվաքանակը և ազգային կազմը ներկայացնող առաջին քիչ թե շատ մանրամասն տեղեկագրերը, արդեն Քղի հորջորջվող պատմական Խորձյանում ակնհայտ էին լուրջ և անդառնալի խաթարումները:

Այնուամենայնիվ, գավառի տեղանունների ուսումնասիրությունը խոսում է հնագույն ժամանակներից հայերի ունեցած գերակշիռ դիրքի մասին: Ուշ միջնադարից սկսած՝ Խորձյան թափանցել են նաև դմլիկական և քրդական ցեղեր, որոնք ժամանակի ընթացքում Խորձյանի/Կեղիի որոշ հատվածներում սկսել են մեծ թիվ կազմել: Վերոնշյալ գավառակներից **Սանջախում**, **Խուրադում** և **Օղջիանում** 19-րդ դարի վերջին մեծամասնություն էին կազմում դմլիկները (զազաներ): Կարծում ենք՝ դմլիկական ծագում ուներ նաև Գայլգետի աջակողմյան **Կռան** (Խուփսիգետ) վտակի շրջանում հաստատված **դմրլցի** (զազանի) կոչվող փոքր աշիրեթը: Որոշ չափով քրդական ծագում ունեին Քղիի հարավարևելյան, արևմտյան և հյուսիսային գավառակներում հաստատված **զմթեկցի** (ծմակցի (?)), **գազեցի** (կազեցի), **հասանանցի**, **բլեջանցի**, **խարաբաշցի** (թրք. karabaşlı) ցեղերը: Ընդ որում, նրանց հիմնական զանգվածը գավառի տարածքում հայտնվել էր գերազանցապես 19-րդ դարում Արևմտյան Հայաստանի այլևայլ գավառներից (Մուշ, Բուլանուխ, Վարդո, անգամ՝ Բասեն):

Ի դեպ, հյուսիսային գավառակների քրդերի հիմնական հատվածը, նստակեցության անցնելով, նկատելիորեն թրքացել էր¹⁸: Ուշագրավ է, որ Քղիի ծայրարևելյան **Քարեր** գավառակում բնակվող և «Քյուչուկ աղայի» գերդաստանին ենթակա քրդական փոքր ցեղին վերագրվում էր հայկական ծագում: Հետաքրքիր է նաև, որ Խարաբաշ-դարայի առանձին բնակավայրերում հաստատված թուրքմենները շրջակա քրդական մեծամասնության միջավայրում 19-րդ դարի վերջին նույնպես ուծացվել էին և կորցրել էթնիկական նկարագիրը¹⁹: Քղիի հյուսիսային **Խուրթուզի**, **Ներքին** և **Վերին Խորթի**, **Հանդրես** գավառակների որոշ գյուղերում (Հոլանգ, Քյունբաթ, Հունիա, Դարաքյով (Ձորագյուղ), Բարմաքսզ (Բառնակույս), Քյոսալար (Կաշե), Ղարբուռ (Գարբո կամ Գավառ), Ղարաքյոմ (Քարիգոմ) ևն) մինչև 19-րդ դ. 20-ական թթ. ապրող քրիստոնյա բնակչությունը թեև դիտվում էր «հույն», սակայն ավելի շուտ դեռ բյուզանդական տիրապետության շրջանում քաղկեդոնականությանը հարած և աստիճանաբար ազգային ինքնությունից խորթացած հայեր էին («հոռոմներ»): 1828-1829 թթ. արևմտահայերի մեծ գաղթի

18 Տե՛ս Колюбакин А. М., նշվ. աշխ., т. I, ч. I, էջ 302-312, **Շղիկան Ա.**, Աշխարհագրական համառոտ գծեր, «Նոր Գեղի» ազգագրական հանդես, Պեյրոս, 1964, Ա մաս, էջ 6-7: Քղիի գավառակներտրոն համանուն գյուղաքաղաքում (հայկական աղբյուրներում Կեղի, ավելի ուշ շրջանում՝ Քղի-Գասապա, թրք. Kasaba), ինչպես նաև մի շարք, որպես կանոն հայաբնակ գյուղերի մահմեդական բնակչությունը թեև համարվել է թուրք, սակայն, ամենայն հավանականությամբ, այն ևս քրդական կամ թուրքմենական ծագում ուներ:

19 Տե՛ս Колюбакин А. М., նշվ. աշխ., т. III, ч. II, էջ 23:

ժամանակ նրանք ևս տեղափոխվեցին Ռուսական կայսրությանն անցած պատմական Գուգարքի արևելյան գավառներ՝ հաստատվելով հիմնականում **Թռեղքում** (Ծավկա/Ծաղկա)²⁰:

2. Կոնդակում հիշատակվող գավառակներն ու բնակավայրերը

Ա) Սբ Կարապետի թեմի սահմանները և գավառակները

Հիշատակվող տեղանունները, փաստորեն, առաջին անգամ հանդիպում են Խլբաշի Սբ Կարապետի վանքի 1475 թ. կոնդակում՝ ուսումնասիրության լայն հնարավորություններ ընձեռելով մասնագետներին: Ուստի պատահական չէ, որ Ավ. Սանջյանի հրապարակմանն առաջինն արձագանքեց Հայաստանի պատմական աշխարհագրության հայտնի մասնագետ Ռոբերտ Հյուսընը (ԱՄՆ), որը նույն մատենաշարում առանձին հոդվածով, ինչպես նաև հոդվածին կից 3 սխեմատիկ քարտեզներով իր դիտարկումները ներկայացրեց հիշատակված տեղավայրերի մասին²¹: Հեղինակի տեսակետներին կանդրադառնանք հետագա շարադրանքի ընթացքում:

Որպես կանոն, կոնդակներում կամ կալվածագրերում (սիկելներ) հարկատու գյուղերի և մյուս բնակավայրերի թվարկմանը նախորդում է տվյալ վանական հաստատության թեմի սահմանների նշումը: Դրա հիմնական նպատակն էր որոշակի տարածքի նկատմամբ ամրագրել վերջինիս իրավունքները, դրանք պաշտպանել հարևան վանքերի հնարավոր ոտնձգություններից: Բացառություն չէ նաև Խլբաշի Սբ Կարապետի կոնդակը: Սակայն հարցը բարդանում է նրանով, որ մեր վավերագրում թեմական սահմանները նշված են մի տեսակ անորոշ, կարելի է ասել՝ «քողարկված» ձևով և կարող են վրիպել ուսումնասիրողի աչքից: Իրականում Սբ Կարապետի թեմի սահմանները նշված են «ոչ ձիշտ» տեղում, այն է՝ մինչև հարկատու բնակավայրերի թվարկումը: Մեր կողմից վերն առանձնացված հատվածը փոքր-ինչ սրբագրելով՝ կստանանք հետևյալ տեսքը. «Զոր գրեմք ի յանուանի եւ յամէնաւորինեալ քաղաքդ Կեղի ի Խլպաշի վանքն ի սուրբն Կարապետ եւ յիւր վիճակն: **[ի Յոխու մինչև յԱռիծնախազ]**... (այնուիետև թվարկվում են հարկատու գյուղերը – Գ. Բ.):»: Ըստ էության, Սբ Կարապետի թեմը նախա-

20 Այժմ Կրաստանի Հանրապետության կազմում: Հատկանշական է, որ թե՛ հայ և թե՛ «հույն» վերաբնակիչներն իրենց հետ Թռեղք էին «տեղափոխել» նաև բնօրրանի տեղանունները, որոնք միայն 1990-ական թթ. փոխվեցին: Բուն Քղիում 19-րդ դ. վերջին - 20-րդ դարի սկզբին մնացել էր «հունաբնակ» միայն 1 գյուղ՝ Հոլանգը:

21 Տե՛ս **Robert H. Hewsen**, A Geographical Note on the Encyclical of Catholicos Aristakēs II (1475), REArm, t. XX, Paris, 1986-1987, էջ 569-576:

պես ընդգրկել է հենց այդ տարածքը («ի Յոխու մինչև յԱռիծնախագ»)՝²²։ Ավելի ուշ՝ թերևս հենց կոնդակի ստեղծման ժամանակ, պայմանավորված թեմի ընդարձակմամբ, ավելացվել են նաև Առիծնախագից հյուսիս՝ մինչև Գայլախագուտի (Պախր) լեռներ ընկած մի շարք գյուղեր (կոնդակում՝ Հանդերծից մինչև Շեն), որոնք մտնում էին Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկում (17-րդ դ.) «**երկիրն** (իմա՝ գավառ – Գ. Բ.) **Հանդերծու**» անունով հիշատակվող գավառի մեջ²³։ Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ դրանք հիշատակվում են ընդհանուր տեքստից մի տեսակ կտրված և մեկուսի։ Թերևս սրանից է բխում նաև այն որոշ շփոթը, որը հանդիպում է Սբ Կարապետի թեմի սահմանների և ենթակա գավառակների թվարկման ընթացքում։ Ավելացնենք, որ թեև Առիծնախագից հյուսիս ընկած գյուղերին վերաբերող մասը կոնդակում փոքր-ինչ անորոշ է ձևակերպված (հստակ չի հասկացվում հիշատակվող **Հանդերծը** գյո՞ւղ է, թե՞ գավառակ), սակայն Հակոբ Կարնեցու հազվագյուտ տեղեկությունը, այնուամենայնիվ, թույլ է տալիս այստեղ ևս կատարել փոքր սրբագրում. «[... **ի Հանդերծ**, նախ] **ի Հանդերծ**, **ի յԱնառիծ**...»²⁴։

Թեմական սահմանների և տարածքի քննարկվող հատվածն օգնում է որոշակի պատկերացում կազմելու պատմական Խորձյանի տարածքում 15-րդ դարում կատարված վարչական փոփոխությունների մասին։ Դավիթ եպիսկոպոսի 1453 թ. հիշատակարանից պարզվում է, որ երբեմնի Խորձյանի տարածքում 15-րդ դարում գոյություն ունեին 2 գավառներ՝ **Կեղի** և **Կոճակ**²⁵։ Ցավոք, դրանց ընդգրկումն ու սահմանները լրացուցիչ տվյալների բացակայության պատճառով մեզ անհայտ են։ Պետք է ենթադրել, որ Կեղին՝ համանուն գյուղաքաղաքով, զբաղեցնում էր Խորձյանի կենտրոնական և հյուսիսային շրջանները։ Ինչ վերաբերում է Կոճակին,

22 Ո. Հյուրընդ, «Յոխու»-ն և «Առիծնախագ»-ը սխալմամբ ընկալելով որպես բնակավայրեր, 1-ինը նույնացնում է հարևան Կարմիր վանք (թրք. Kızılkilise) գավառի **Վիկո** (?) (թերևս Hako, Հրջիկ գետակի հովտում), իսկ 2-րդը Կեղիից/Քղիից հարավ գտնվող Գագ գավառակի **Չիթագագ** կամ **Վերին Չթախ** գյուղի հետ (տես Robert H. Hewsen, նշվ. աշխ., էջ 570)։

23 «Նախ ի հարաւոյ կողմն են գաւառք գովելից ի ծորն Լակզի կոչեցեալ (Գայլգետ/Լճիկի ակունքների շրջանը – Գ. Բ.), ... մինչև հասանէ ի **Խորձունեաց** (իմա՝ Խորձունեաց – Գ. Բ.) **ծորն**, և **երկիրն Հանդերծու**...» («Մանր ժամանակագրություններ։ XIII- XVIII դդ.», հատ. III, Կազմեց **Վ. Ա. Հակոբյան**, Եր., 1956, էջ 550)։ Հակոբ Կարնեցին վարչամիավորը «երկիրն Հանդերծու» անունով հիշատակում է նաև հոր Գևորգ քահանայի կենսագրության մեջ (տես «Մանր ժամանակագրություններ», հատ. I, Կազմեց **Վ. Ա. Հակոբյան**, էջ 247)։ Ենթադրելի է նաև տեղանվան **Հանդերծիք** տարբերակը, որը հանդիպում ենք 1457 թ. Կամախի և Երզնկայի սահմանազխիսն գտնվող նշանավոր Ավագ վանքում ընդօրինակված մի Ավետարանի հետագայի հիշատակարանում (պահվում է Երևանի Ս. Մաշտոցի անվան Մատենադարանում)։ Տես «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմեց **Լ. Ա. Խաչիկյան**, Եր., 1967, էջ 104։ Ի դեպ, չի բացառվում, որ խոսքը վերաբերում է Երզնկայի գավառի Հանդեխի (Հանդիսի) գյուղի նախնական անվանաձևին։

24 Մեր կարծիքով **2 Հանդերծ** տեղանունները տարակուսանքի մեջ են գցել գրագիրն, որը կոնդակում թողել է միայն մեկը։

25 Խոսելով Պարաղոյունու Ջհանջախի 1450 թ. դեպի Երզնկա կատարած արշավանքի և վայրագությունների մասին գրիչը նշում է, որ բռնակալը, ի շարս մի շարք գավառների, ավերել է նաև «գԿեղի, գԿոճակն» գերեվարելով տեղի բնակչությանը։ Տես **Սրվանձտեանց Գ.**, Թորոս աղբար, մասն Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 380-381։ Հմտ. **Փիրղալենեան Ղ.**, Նոտարք Հայոց, մ. թ., էջ 165, «ԺԵ դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ (1451-1480), կազմեց **Լ. Ա. Խաչիկյան**, Եր., 1958, էջ 31։

ապա Դավիթ եպիսկոպոսի հիշատակարանից պետք է ենթադրել, որ գավառը 15-րդ դարի կեսերին զբաղեցրել է պատմական Խորձյանի հարավային հատվածը, այդ թվում՝ Գայլգետի (Կեղի կամ Մեծջուր) ինչպես աջափնյակը կամ բուն **Կոճակը**, այնպես էլ ձախափնյակը կամ հետագայի **Չանախչի** (հայկական միջավայրում՝ նաև Չահանգչի), **Գագ** (Կագ) և **Սանջախ** (Սանջակ) գավառակները: Ցավոք, այդ հարցին հնարավոր չէ սպառնիչ պատասխան տալ լրացուցիչ տվյալների բացակայության պատճառով, մանավանդ որ վավերագիրը Կոճակում («ի Կոճակ») նշում է միայն Գայլգետից արևմուտք ընկած գյուղերը: Այնուամենայնիվ, որոշ բնակավայրերի հիշատակումը թույլ է տալիս եզրակացնել, որ Կոճակը ներառել է նաև **Հերթև** (Հարտիվ) գավառակի տարածքը, այսինքն՝ գավառի արևմտյան սահմանագիծն անցել է **Սուրբ Լույս** (աղձատված՝ Սըլպուս) և **Սևդին** լեռների ջրբաժանով²⁶: Բացի այդ՝ ենթադրելի է, որ 15-րդ դարում առանձին վարչամիավոր էր նաև վերոհիշյալ Հանդերձը²⁷:

Այսպիսով՝ քարտեզագրական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կոնդակում, ըստ էության, նշված են Սբ Կարապետի վանքի թեմական սահմանները, որոնք 15-րդ դարի վերջին քառորդին ձգվում էին Ծոփքի Բալահովիտ (Բալու) գավառի Հոխու (Օխու, թրք. Կ1Ծ1) գավառակից²⁸ մինչև Գայլախագուտ (Պախր) լեռնաշղթա՝ ներառելով պատմական Խորձյանի հյուսիսարևմտյան, արևմտյան, կենտրոնական, մասամբ՝ հարավային հատվածները: Ընդ որում, թեմի արևելյան սահմանները կազմել են Գայլգետի (Կեղի) հունը և դրա ձախակողմյան **Օրոր** օժանդակի ստորին ավազանը:

Բ) Բնակավայրերի Ռ. Հյուսրնի տեղադրությունը

Անշուշտ, կոնդակի ամենից հետաքրքիր հատվածը բնակավայրերի շարքն է, ինչն ավելի է որոշակիացնում Խլբաշի Սբ Կարապետի թեմի ընդգրկած տարածքն ու սահմանները: Ինչպես արդեն նշել ենք, Ավ. Սանջանի հրատարակությանն անմիջապես արձագանքել է Ռ. Հյուսրնը՝ հանդես գալով առանձին հոդվածով: Ընդ որում, որքան մեզ հայտնի է, առ այսօր

26 Ռ. Հյուսրնը կրկին սխալվում է, երբ Կոճակը դիտում է առանձին բնակավայր՝ այն նույնացնելով Գագ գավառակի Խուջախ կամ Քուջակ գյուղի հետ (թրք. Kuçak): Տե՛ս **Robert H. Hewsen**, նշվ. աշխ., էջ 570: Չբացառելով, որ վերջինս որոշակի կապ կարող է ունենալ Կոճակ տեղանվան հետ, նշենք, որ Գայլգետի ձախափնյակը զբաղեցնող Գագն ամբողջությամբ դուրս էր Սբ Կարապետի թեմի տարածքից:

27 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին **Հանդերձը** հայտնի էր **Հանդրիս** աղավաղված անունով (Հանդերձ/Հանդերց>Հանդերս/Հանդրիս): Հանդրիսի համար տե՛ս **Колобакин А. М.**, նշվ. աշխ., т. I, ч. I, էջ 310: Հմմտ. Տարեգիրք, էջ 3-7: Գավառակի անվան հանդիպող մյուս տարբերակներն են **Էնտրիս** կամ **Ունդրես** (տե՛ս ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, գ. 59, թ. 1բ: Հմմտ. «Քղիի վիճակը», «Դրօշակ», ժրնու, 1896, N 16, էջ 126):

28 Այդպես է կոչվել համանուն հայաբնակ ավանի անունով: Ամենայն հավանականությամբ, նախապես վերջինս եղել է գավառակի կենտրոնը, և չնայած 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին Օխուի վարչական կենտրոնը տեղափոխվել էր հարևան **Թախա** (Օխու.թեմի), վարչամիավորն ավանդաբար շարունակում էր կոչվել նախկին անունով:

նա միակ ուսումնասիրողն է, ով փորձել է ներկայացնել քննարկվող վավերագիրը պատմական աշխարհագրության տեսանկյունից: Հեղինակն ուսումնասիրության ընթացքում օգտվել է 1955 թ. հրատարակված ԱՄՆ ռազմաօդային ուժերի հատուկ քարտեզի (US Air Force Aeronautical Approach Chart) «Erzincan (340A-I)» (իմա՝ Երզնկա) և «Elâzığ (340-IV)» (իմա՝ Խարբերդ), իր խոսքերով, «մեծամասշտաբ» (large-scale) պլանշետներից: Հետևաբար դրանք խիստ մանրամասն քարտեզներ են (մասշտաբ՝ 1:200 000 կամ 1:100 000), որոնցում արտացոլված են տվյալ տարածքի ինչպես բոլոր բնակեցված կամ ավերակ (լքված) բնակավայրերը, այնպես էլ օժանդակ շինությունները (ամառանոցներ, ագարակներ, գոմեր, ջրաղացներ ևն)²⁹: Ցավոք, Ռ. Հյուսընը ոչ միշտ է իր եզրահանգումները կատարել պատշաճ ձգբրտությամբ, և նրա հողվածում հանդիպում են բնակավայրերի տեղադրության մեծաքանակ սխալներ: Դրա հիմնական պատճառը թերևս նրա օգտագործած քարտեզներում արտացոլված տեղանքի վատ իմացությունն է, ինչպես նաև տեղանունների թուրքերեն աղավաղումների ոչ ձիշտ մեկնաբանությունները: Այսպես՝ Ռ. Հյուսընը պնդում է, թե իբր Սբ Կարապետի կոնդակում բնակավայրերը «նշված են ամբողջովին անկանոն կերպով» («listed in a tottally haphazard way»)՝ առանց «այբբենական» (?) կամ աշխարհագրական որևէ հաջորդականության³⁰: Այդ պատճառով հեղինակը հիշատակվող գյուղերը «փնտրում» է ոչ միայն բուն Խորձյանում, այլև դրա սահմաններից դուրս, մասնավորապես՝ գավառից արևմուտք ընկած հարևան Կարմիր վանքի կամ Հայդարիի գավառում (ներկայումս՝ Դերսիմ)³¹: Ավելին՝ Ռ. Հյուսընն անհիմն կերպով «սրբագրում» է պատմական Խորձյանի սահմանների՝ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի տեղորոշումը՝ դրանք արևմուտքում ընդարձակելով Մուզուր (Մնձուր) գավառի հաշվին³²: Ի դեպ, հեղինակի կարծիքով, կոնդակում հիշատակվող բնակավայրերը 44-ն են³³, որոնցից «հստակ» է 21-ի տեղադրությունը, իսկ 11-ը «հնարավորինս» ձգբրիտ նույնացվում են «ներկայիս գյուղերի հետ»: Ըստ Ռ. Հյուսընի՝ միայն 12 բնակավայրերի տեղադրությունն է անորոշ, քանի որ, ինչպես ինքն է նշում, 1475 թվականից հետո «դրանք կամ անվանափոխվել են, կամ էլ դրանք պետք է փնտրել անանուն բազմաթիվ՝ քարտեզում որպես ավերակներ նշված բնակավայրերի

29 Տե՛ս Robert H. Hewsen, նշվ. աշխ., էջ 569:

30 Տե՛ս Robert H. Hewsen, նշվ. աշխ., էջ 570:

31 Վերոհիշյալ գավառի մասին տե՛ս Հարությունյան Բ. Հ., Դերսիմ (բնակավայրերի քարտեզ 1915 թ. վիճակով), «Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նյութեր և ուսումնասիրություններ», պրակ 5, ներդիր, Եր., 1973: Հմմտ. Badalyan G., Dersim en 1914, Echelle: 1:250000. - Antranik, Dersim. Carnets de voyage chez les Kizilbaches et les Mirakian. 1888 & 1895, Traduction de Jean-Pierre Kibarlian, Paris, 2017, ներդիր:

32 Տե՛ս Robert H. Hewsen, նշվ. աշխ., էջ 571: Տե՛ս նաև 576-րդ էջում գետեղված սխեմա-քարտեզը: Հմմտ. Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Եր., 1963 (քարտեզ, մ. 1:1250000), ներդիր: Տե՛ս նաև Հարությունյան Բ. Հ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Եր., 2001:

33 Տե՛ս Robert H. Hewsen, նշվ. աշխ., էջ 569- 570:

շարքում»³⁴: Նախ և առաջ նշենք, որ, ինչպես ցույց ենք տվել Սբ Կարապետի թեմի մեջ մտնող գավառակների քննության ժամանակ, Ռ. Հյուսրնը թյուրիմացաբար բնակավայրեր է դիտել **Հոխու**, **Առյուծնախազ** և **Կոճակ** վարչամիավորները: Այնուհետև՝ բնակավայրերն իրականում 42-ն են, այդ թվում՝ գավառի կենտրոն Կեղին («**յամհնարինեալ քաղաքը Կեղի**»), որը տարօրինակ ձևով դուրս է մնացել հեղինակի ուշադրությունից: Բացի այդ՝ հեղինակի կողմից առանձնացված առաջին երկու խմբերի 32 բնակավայրերից միայն 15-ն են ճիշտ տեղադրված, այն էլ՝ 2-ը՝ որոշակի կասկածով (հեղինակի կողմից դրանք ցույց են տրված ? նշանով): Ներկայացնենք այդ գյուղերը՝ զուգահեռաբար նշելով դրանց անվանումների թուրքական տարբերակները. Աստղղբերդ – Azakpert,, Սերկկի – Sigivilik (ճիշտ ձևը՝ Sivigilik), Տարման – Temuran, Ապողնակ – Aşbinek ?, Առեքն – Arik, Ափխզուտ – Aşbuzut, Ծերմակ – Zermek կամ Cerme ?³⁵, Խուպս – Hupus, Աղտաղտ – Aşdat, Հագստուն – Hakistan, Խոլխոլք – Holhol, Հարտիվ – Hardif, Հարկապ – Hergep, Պաղին – Bagin (ճիշտ ձևը՝ Başin), Ամաթիճ – Ameriç: Մնացած բնակավայրերը տեղադրված են տեղանունների պատահական նմանությամբ, ինչի հետևանքով Խլբաշի Սբ Կարապետի շուրջ 2 տասնյակ գյուղեր, որոնք, կրկնում ենք, հիշատակված են աշխարհագրական որոշակի տարածքում (տե՛ս «Սբ Կարապետի թեմի սահմանները և գավառակները» ենթակետը), սխալմամբ և խառնափնթոր ձևով հայտնվել են ոչ միայն Խորձյանի/Կեղիի ողջ տարածքում, այլև հարևան որոշ գավառներում, մասնավորապես՝ Դերսիմում (Կարմիր վանք/Տեր Օվան, Չարսանջակ), և անգամ շատ ավելի արևելք ընկած Ճապաղջրում³⁶: Ներկայացնենք այդ գյուղերը՝ զուգահեռաբար նշելով նաև Ռ. Հյուսրնի առաջարկած տեղադրությունը. Սեղանք – Selenk, Չուառիճ – Civarik, Ղազի – Hozkaşı, Եվալիկավանք – Akkilise կամ Alakilise³⁷,

34 Նույն տեղում, էջ 570: Ահա այդ հատվածը. “These villages have either been endowed with new names since 1475 or are to be sought for among the numerous villages marked on the map as „ruins””:

35 Թուրքերեն գրությամբ Çerme, որը հայկական աղբյուրներում հիշատակվում է **Ջերման** (նախապես՝ Ջերման(յ)) ձևով և որևէ կապ Չերմակի հետ չունի: Ընդ որում, Խորձյանի (Կեղի) տարածքում նույնանուն 3 գյուղերից Ռ. Հյուսրնը նախընտրել է **Հանդերձ/Հանդրիս** գավառակի Ջերմանը, թեև հեղինակի տեղադրությունը որոշակի ճշգրտման կարիք ունի (տե՛ս նույն տեղում, էջ 574, սխեմա-քարտեզ): Ավելացնենք, որ նույնանուն գյուղ (պատմ. Ջերմ կամ Ջերմա) կար նաև հյուսիսային հարևան Դերջան գավառում՝ պատմական Մանանաղի գետի (թրք. Tuzla) ձախ ափին:

36 Տե՛ս նույն տեղում, էջ 570, 574, սխեմա-քարտեզ:

37 Ասիկավանք և Կարմիր եկեղեցիք գյուղերի տեղադրությունն առավել խցցելի է, քանի որ Ռ. Հյուսրնը դա կատարել է կրկնակի սկզբունքով: Նրա կարծիքով՝ Ասիկավանքը մենաստան է (?), որը «կարելի է նույնացնել կամ Աղբիլիսե (Դերսիմի Չարսանջակ և Մեծկերտ գավառների սահմանագլխին գտնվող հին հայկական **Ճերմակ վանքը** – Գ. Բ.), կամ Ալաբիլիսե (Alailise Köy, Խորձյան/Կեղիի արևելյան Խարաբաշ-դարա գավառակում – Գ. Բ.) գյուղերի հետ»: Տարօրինակ է Ռ. Հյուսրնի այն միտքը, որ «եթե ... Ասիկավանքը հնարավոր լիներ ճշտել (should be corrected) Ասիխուսկավանք (անգլ. Spitakavank, “white monastery”?)», ապա բնակավայրի նույնացումն Աղբիլիսեի (թրք. Akkilise – «սպիտակ եկեղեցի» – Գ. Բ.) հետ «մոտ կլիներ իրականությանը (would be close to certain)»: Երկրորդ դեպքում Ռ. Հյուսրնը փորձում է գյուղը նույնացնել Կեղիից հարավ գտնվող Քարմուն (Կարմուն) կամ Ղզլ (թրք. Kızı, իմա՝ «կարմիր») բնակավայրերի հետ: Նշենք, սակայն, որ կոնդակում թվարկվող վերջին բնակավայրերը, ի թիվս որոնց Կարմիր եկեղեցիքը, գտնվել են Կեղիից հյուսիս: Ուստի հեղինակի կողմից առաջարկվող 2 բնակավայրերի տեղադրությունն էլ մերժելի է:

Բերդարիզի – Berdarac ? (նաև՝ Berderac)³⁸, Ծծուարս – Zugur, Պայթակն – Payizgân, Խոպակ – Hopik, Մրուն – Musrun, Խարիկ – Orik, Խուպ ձոր – Hop, Խուլմին – Hulman, Խորթոն– Kortan Kom, Կարմիր եկեղեցիք –Karmurun կամ Kizil (Kızıl):

Ինչ վերաբերում է այն 12 գյուղերին (Ապար, Ասնակ, Ճարոզեղ, Սենեկն, Ապծեք, Ալրդդնիկ, Կտակ, Ագարակ, Հանձևիկ, Հանդերձ, Առինձ, Շեն)³⁹, որոնք, ըստ Ռ. Հյուսընի, չեն տեղորոշվում ժամանակի ընթացքում դրանց ամայացման կամ անվանումների անձանաչելիորեն փոփոխման պատճառով, ապա այստեղ ևս հեղինակը հապշտապ և չհիմնավորված եզրահանգում է կատարել: Իրականում, գրեթե առանց բացատրության, նշված բոլոր բնակավայրերի տեղադրությունը ստույգ հայտնի է (տե՛ս ստորև):

Այսպիսով՝ Ռ. Հյուսընի նույնացումների միայն 1/3-ը մի փոքր գերազանցող մասն է ճշգրիտ, այն էլ՝ որոշակի վերապահումներով:

Գ) Բնակավայրերի մեր տեղադրությունը

Քարտեզագրական քննությունը թույլ է տվել Խլբաշի Սբ Կարապետի հարկատու գյուղերը խմբավորել ըստ հետևյալ ներքին վարչամիավորմաների.

ա) **Կեղիի (Քղի) գավառակ**. ընդգրկում էր Գայլգետի միջին հոսանքի (այդ հատվածում՝ Կեղի կամ Մեծջուր) ավազանի ձախափնյակը, ինչպես նաև վերջինիս աջակողմյան Կոան (Խուփսի գետ) վտակի ստորին ձորահովիտը՝ հետևյալ 11 բնակավայրերով (առանձին դեպքերում նշել ենք նաև տեղանունների մյուս տարբերակները)՝ **Կեղի** («քաղաքը Կեղի»), պատմ. Կողոբերդ⁴⁰, ուշ շրջանում՝ **Քղի**), **Ապարն**, **Ճարոզեղ**, **Ջվառիձ** (թրք. աղ՝ ձատամար՝ Sivariç), **Ափխզուտ** (նաև՝ Աղպզուտ կամ Աղբզուտ), **Խուպս** (նաև՝ Խուփս), **Ղազի** (նաև՝ Խազիգեղ, թրք. Kadıköy), **Ապիկավանք** (նաև՝ Ապիպեվանք կամ Ափեվանք, թրք. Abvank), **Բերդարիզի** (Բերդ+արիզի⁴¹, թրք.

38 Ռ. Հյուսընի այս նույնացումը դարձյալ թեական է: Ուշագրավ է, սակայն, որ իր սխեմա-քարտեզում (էջ 574) Գինեկ կամ Գյոնուք գետի ձախափնյակում (Ճապաղջուր) գտնվող այս բնակավայրը նա ցույց չի տվել: Օգտվելով առիթից ցանկանում ենք ներկայացնել մեր տեսակետը Berdarac (նաև՝ Berderac կամ Berderas) տեղանվան վերաբերյալ: Այն որոշակիորեն առաջացել է **Բերդառազ(ք)** հայերեն ձևից քրդերենի ազդեցությամբ: Այս մտքին հանգել ենք ուշմիջնադարյան ձեռագրական որոշ հիշատակագրություններում հանդիպելով վերջինիս «խակոտնյա» **Բերդին յետու** (Բարբերդ) կամ **Բերդին յեռև** (նաև՝ **Բերդիեռց**) տարբերակներին (տես «Ժամանակագրության Ստեփաննոսի Օրբելեանի», Հրատարակության համար պատրաստեց պատմ. գիտ. թեկնածու **Աշ. Արրահամյանը**, Եր., 1942, էջ 43, «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատ. 5, Կազմեց՝ **Նորայր** եպս. **Պողարեան**, Երուսաղեմ, 1971, էջ 381):

39 Այս շարքից Ռ. Հյուսընի առանձնացրել է **Ապարն**, **Ասնակ**, **Աղրդդնիկ** և **Առինձ** բնակավայրերը, որոնք հանդիպում են իր օգտագործած «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» Ա հատորում (Եր., 1986, հեղ.՝ **Թ. Խ. Հակոբյան**, **Ս. Տ. Մելիք-Բախշյան**, **Հ. Խ. Բարսեղյան**), որում, սակայն, բնակավայրերի տեղադրությունը հստակ չի նշվում (տես **Robert H. Hewsen**, նշվ. աշխ., էջ 570):

40 Տես «Աշխարհացոյց», հավելված, էջ 30: Հմմտ. **Երեմյան Ս. Տ.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 60, 107:

41 Քղիի խոսվածքում «արիզի(ն)» են կոչվել սրբազան պուրակները, որտեղ ծառահատումն արգելված էր (տես **Պողիկեան Սողոմոն**, Թեմրան ծննդավայրս, Ֆրեզնո, 1974, էջ 17-18):

աղձատմամբ՝ Pertelik), **Հագստուն** (նաև՝ Հանգստուն, թրք. Hakistan)⁴¹, **Ծծվարս** (օտար աղձատմամբ՝ Dizvaz), **Պայթակն** (նաև՝ Բերդակ, թրք. աղձատմամբ՝ Pertek)⁴²:

Խորձյանի կենտրոնն Կեդին գտնվում էր Գայլգետի աջափնյակում բարձրացող **Սեդեխառում** (Սեդեխառնում), **Շուշանքար**, **Քարգլուխ** (բրբռ. Քարգլոխ) և **Ծովառ** լեռների միջև ընկած սարահարթում: Այն գավառի առավել բազմամարդ և հայաշատ բնակավայրն էր ընդհուպ մինչև Մեծ եղեռն: Մանրամասն կանգ չառնելով Կեդիի նկարագրության վրա⁴³ ստորև ցանկանում ենք ավելի հանգամանակից ներկայացնել քննարկվող շարքում առաջինը հիշատակվող **Ապար** («յԱպարն») կամ **Առապար** բնակավայրը, որը, կեղեցի հայերի շրջանում պահպանված ավանդական պատմությունների համաձայն, սկզբնապես եղել է գավառի կենտրոնատեղի բերդաքաղաքը⁴⁴: Կարծում ենք՝ դրանում կարևոր դեր է խաղացել այն հանգամանքը, որ մինչև 19-րդ դ. Խորձյանի հոգևոր առաջնորդանիստը՝ Խլբաշի Սբ Կարապետը, գտնվել է բերդաքաղաքի մերձակայքում⁴⁵: Ի դեպ, 17-րդ դարի սկզբին Ապարը կողոպտվել և ավերվել է Շահ Աբասի հրոսակների կողմից⁴⁶, իսկ 1616 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով լքվել և ամայացել է⁴⁷: Ապարը գտնվում էր Գայլգետի աջ ափին՝ Կեդիից շուրջ 5 կմ հյուսիս: Մասնավորապես «Տարեգրքում» տպված Վահան Հայրապետյանի Քդիի քարտեզ-սխեմայում Ապարը նշվում է գետի աջափնյակում, իսկ Սբ Կարապետը՝ ձախափնյակում⁴⁸: Դա անուղղակիորեն ցույց է տալիս նաև օսմանյան քարտեզի համապատասխան պլանշետը, որտեղ մենաստանը մակագրված է Գայլգետի ինչպես արևմտյան (աջ), այնպես էլ՝ արևելյան (ձախ) ափերին⁴⁹: Ըստ Խորձյանի (Քդի) 1907-1912 թթ. թեմակալ առաջնորդ **Պսակ Ծ. Վ. Տեր-Խորենյանի** (նահատակված 1915 թ.)՝ Սբ Կարապետ վանքը կառուցված էր Ապարի մերձակայքում՝ Կեդիի (իմա՝ Ապարի – Գ. Բ.) բերդին կից, ընդ որում՝ Հագստունի մոտ⁵⁰, որը դարձյալ գտնվում էր Գայլգետի ձախ ափին⁵¹: Դ. Ինձիձյանի տվյալներից պարզվում է նաև⁵², որ

41 Ամենայն հավանականությամբ, թուրքական տարբերակն առաջացել է նախնական **Հագստան** («Հագստան գիւղ») հայերեն ձևից:

42 Պայթակն/Բերդակ նույնացումը՝ ըստ Վահան վրդ. Պարտիզակցու տեղեկագրի (հեղինակի տեղեկագրում «Բերդակ կամ Պայթազ») (տես ՉԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին III, գ. 59, թ. 6ա):

43 Կեդի գյուղաքաղաքի մասին տես **Ինձիձյան Դ.**, Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, էջ 106-107, **Արսև**, Քդիի հիմնարկությունն է ի վեր, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1899, N 782, էջ 1, **Ա-Ղօ**, Կանի, Բիթլիսի և Երզրումի վիլայեթները, Եր., 1912, 189-190, **Սրապեան Լ.**, նշվ. աշխ., էջ 12-16:

44 Տես **Սրապեան Լ.**, նշվ. աշխ., էջ 16: Հմմտ. **Ա-Ղօ**, նշվ. աշխ., էջ 189:

45 Տես **Ինձիձյան Դ.**, Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, էջ 106-107:

46 Տես Տարեգիրք, էջ 25: Հմմտ. **Նիկիեան Ա.**, նշվ. աշխ., «Քդի գաւառ» քարտեզ-սխեմա, էջ 8-9, ներդրի:

47 Ապարի վերապրած բնակչությունը հաստատվել է տարբեր վայրերում, այդ թվում նաև հարևան Կեդի գյուղաքաղաքում (տես **Սրապեան Լ.**, նշվ. աշխ., էջ 16-17):

49 Տես ԿԿԱԿ, IV-14:

50 Սրանով է պայմանավորված վանքի թուրքական անվանումը Hakistan Manastırı, իմա «Հագստունի վանք»:

51 Պսակ վարդապետը վանքի **խլբաշի** (< թրք. Kalebaşı – «բերդագլուխ») **Սբ Կարապետ** հիմնական անվանումը կապում է Կեդիի «նշանաւոր» բերդի հետ (տես Տարեգիրք, էջ 24-25): Իրականում, սակայն, խոսքը վերաբերում է Ապարի բերդին, որը հիմնիվեր ավերվել է վերոհիշյալ երկրաշարժի ժամանակ: Այդ մասին վերոհիշյալ Հագստուն (Հանգստուն) գյուղի Սբ Խաղ Հայրապետ (Սբ Խաղիոր) եկեղեցուն մինչև 1915 թ. պահվող մի ծեռագրում զրանցված չափածո

Տրապիզոնից Էրզրումի վրայով դեպի Դիարբեքիր, որտեղից էլ Հալեպ—Դամասկոս (Շամ) երթուղով մինչև Երուսաղեմ հասնող հնագույն մայրուղին Խործյանի/Կեղիի հատվածում Գայլգետի ձախափնյակից՝ Սբ Կարապետի շրջակայքով, անցել է աջափնյակ (իմա՝ Ապարի շրջան): Ընդ որում, նկատի ունենալով բնակավայրի ռազմավարական և տնտեսական նշանակությունը, չենք բացառում, որ Ապարը պատմական **Արտալես** (հնր. ΑΡΤΑΛΕΣΟΣ) ամրոցն է, որին դեռ 6-7-րդ դդ. առանձնահատուկ դերակատարում էր վերապահված պարսկա-բյուզանդական սահմանագծի պաշտպանական համակարգում: Ինչպես հայտնի է, Բյուզանդիայի Հուստինիանոս կայսրը (527-565) այդտեղ կառուցեց ամրակուռ բերդ, որը հսկում էր և՛ սահմանագծի տվյալ հատվածը, և՛ այդտեղով անցնող առևտրական ճանապարհը⁵³: Սակայն Ա. Եղիկյանի հոդվածում այն հանդիպում է 20-րդ դարասկզբի Քղիի հայաբնակ բնակավայրերի շարքում, ինչը հավաստում է, որ ժամանակի ընթացքում Ապարը, այնուամենայնիվ, վերաբնակեցվել է և հայաբնակ է եղել մինչև 1915 թ. (մյուս աղբյուրներն այդ մասին լռում են)⁵⁴: Պետք է ենթադրել, որ նոր Ապարը գավառում լայնորեն տարածված բազմաթիվ ագարակատիպ բնակավայրերից մեկն էր՝ ոչ մշտական բնակչությամբ: Մի դիտարկում ևս: Լ. Սրապյանը նշում է, որ գավառի նոր կենտրոն Կեղին (Քղի-Գասապա) հիմնվել է 1616 թվականից հետո: Սակայն Խլբաշի Սբ Կարապետի վանքի կոնդակում արձանագրված «յամլենաւրինեալ քաղաքդ Կեղի» պարբերությունը որոշակիորեն հերքում է այս կարծիքը: Գտնում ենք, որ նախապես Ապարը գավառի կրոնական կենտրոնն է եղել, մինչդեռ Կեղին՝ վարչական⁵⁵:

Ավարտելով նշենք, որ վերոհիշյալ գյուղերից Ճալըզեղը, Ափխզուտը (Աղպզուտ կամ Աղբզուտ), Խուլպը (Խուլփս, ի դեպ՝ գավառի ամենաբազմամարդ գյուղերից-Գ. Բ.)⁵⁶, Ղազին (Խազիգեղ), Այիկավանքը (Այիպեվանք կամ Ափեվանք), Հագստունը (Հանգստուն) և Ծծվարսն իրենց ազգային դիմագիծը պահեցին մինչև ցեղասպանությունը: Այնուամենայնիվ, պատմական անբարենպաստ պայմանների հետևանքով Չվառիձը,

հիշատակագրության մեջ նշված է. «...տապալեցաւ բերդն ամրոցին (= Ապար - Գ. Բ., ընդգծումը մերն է), / Կեղույ տանն ապաստանին»: 19-րդ դ. վերջին դեռ կանգուն էին Ապարի բերդի արևելյան պատերը (տես **Արսեն**, նշվ. աշխ.):

52 Տես **Ինձիճան Ղ.**, Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, էջ 107, 109:

53 Սանդրաման տես **Աղոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Եր., 1987, էջ 23: Ս. Երեմյանն Արտալեսը տարօրինակ կերպով նշում է «այժմյան Քղիից (գյուղաքաղաք - Գ. Բ.) հարավ Հանգստուն գյուղի մոտ»: Տես **Երեմյան Ս. Տ.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 40: Իրականում Հանգստուն/Հագստուն բնակավայրը գտնվում էր Կեղիից (Քղի) իյուսիս Սբ Կարապետի մերձակայքում:

54 Տես **Եղիկեան Ա.**, նշվ. աշխ., էջ 6: Ի դեպ, այդ առումով հեղինակի գյուղաշարքը, իրոք, եզակի է:

55 «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում (հատ. Ա, էջ 306) Ապարը սխալմամբ նույնացվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գրիգորիս Ժ Մակվեցու կողմից շնորհված Տարոնի նշանավոր Սբ Հովհաննես (Եղորդատի) վանքի կոնդակում հիշվող նույնանուն բնակավայրի հետ: Այդ տեսակետն ընդունել է նաև Ռ. Հյուսընը: Իրականում խոսքը Աղծնիքի Հայնի հայկական գյուղաքաղաքից հարավ Արմ. Տիգրիսի ձախակողմյան **Ամբար** (< **Ապար**) վտակի ափին գտնվող նույնանուն այլ բնակավայրի մասին է (տես **Քաղայան Գ. Ս.**, նշվ. աշխ., էջ 99):

56 Տես Տարեգիրք, էջ 73-74: Հմմտ. «Геноцид армян в Османской империи», Ер., 1983, էջ 422:

Բերդարիզին և Պայթակնը կամ Բերդակը հայաթափվել էին (1870–ական թթ. արդեն օտարաբնակ էին):

բ) **Տարմանի շրջան և Խասեր գավառակ:** Կոնդակում հիշատակվում են 8 գյուղեր, որոնք ընկած էին Գայլգետի ձախակողմյան Օրոր վտակի և դրա Օսնակ (< Ասնակ, նաև՝ Հոսնակ) օժանդակի ձորահովիտներում: Դրանք են (հարկ եղած դեպքում նշել ենք նաև տեղանունների այլ տարբերակներ)՝ **Ասորդերդ** (նաև՝ Աստղաբերդ, թրք. Աղձատմամբ՝ Azakpert), **Սերկևլի** (նաև՝ Սերկևլիկ, թրք. աղձատմամբ՝ Sivigilik), **Տարման** (նաև՝ Դարման կամ Թամրան, թրք. աղձատմամբ՝ Temuran), **Ապողնակ** (թրք. աղձատմամբ՝ Aşbinek⁵⁷), **Ասնակ** > Օսնակ (նաև՝ Հոսնակ կամ Խոսնակ), **Սեղանք**, **Ծերմակ** (նաև՝ Ծերմաք, թրք. աղձատմամբ՝ Zermek), **Առեքն** (նաև՝ Արեգ): Ի դեպ, դրանք գավառի առավել բազմամարդ գյուղերն էին (հատկապես Տարմանը/Դարմանը, որն ավելի շուտ գյուղաքաղաք էր)⁵⁸ և մինչև Հայոց ցեղասպանություն անաղարտորեն պահել են ինչպես հայկական անվանումները, այնպես էլ ազգային նկարագիրը: Վերոհիշյալ բնակավայրերին միացրել ենք նաև Ավրդնիկը (Ալրդնիկ < Վարդենիք)⁵⁹, որը գտնվում էր Օրոր գետակից զգալի հարավ՝ նույն Գայլգետի ձախափնյակում:

գ) **Կոճակի գավառակ:** Հիշատակվող 10 բնակավայրերից իրականում միայն 8–ն էին մտնում Կոճակի կազմի մեջ՝ սփռված Գայլգետի աջափնյա **Կոան** և **Հորեվանք** օժանդակների ձորահովիտներում: Նույն խմբում վերջինը նշվող Խարիկ և Պաղին գյուղերը դուրս էին պատմական Խորձյանի (Կեղի) տարածքից և վարչականորեն մտնում էին հարևան Պաղնատուն գավառի մեջ: Ստորև ներկայացնում ենք վերոհիշյալ գյուղերը՝ հարկ եղած դեպքում նշելով տեղանունների մյուս տարբերակները. **Կոակ** (20–րդ դ. սկ. Խասգեղ)⁶⁰, **Խոպակ** (20–րդ դ. սկ. Խուպեկ), **Խոլխոլք** (նաև՝ Խոլխոլ), **Հարտիվ** (նաև՝ Հերթև կամ Հերտիֆ), **Ագարակ** (20–րդ դ. սկ. Ագրակ, թրք. աղձատմամբ՝ Ekrek), **Հանծնիկ** (նաև՝ Անզնիկ, Անզըվիկ կամ Անզրնիկ), **Մրուն** (թրք. Murun)⁶¹, **Հարկապ**, **Խարիկ**, **Պաղին** (նաև՝ Բաղին)⁶²: Այս խմբին ավելացրել ենք ևս 2 գյուղ, որոնք աշխարհագրական

57 Ամենայն հավանականությամբ՝ հայերեն **Արբենակ** տարբերակից:

58 Տարմանը 1870–ական թթ. ժամանակավորապես եղել է Քղիի գավառի վարչական կենտրոնը (տես մասնավորապես **Коллюбакин А. М.**, նշվ. աշխ., տ. III, գ. II, էջ 14):

59 Տես **Շրիկեան Ա.**, նշվ. աշխ., էջ 6: Ընդ որում, Ավրդնիկը հիշեցնում է Աղձնիքի **Սևան** տեղանվան **Ազըվնիկ** ձևավորությունը (տես **Коллюбакин А. М.**, նշվ. աշխ., տ. III, գ. II, էջ 78: Հմմտ. **Քարայան Գ. Մ.**, նշվ. աշխ., էջ 99):

60 Կոճակի գյուղերի շարքում առաջինը հիշվող Կոակին անմիջապես հաջորդում է Խուպակը, որը 20–րդ դ. սկզբին կոչվում էր Խուպեկ: Ելնելով այն հանգամանքից, որ Խուպեկի անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրը Խասգեղն էր, վերջինս նույնացրել ենք Կոակի հետ:

61 Սեր կարծիքով՝ Մրունը նույնանուն է Արիստակես Լաստիվերցու հիշատակած **Մորմրան** բերդագյուղին, որի անվանումը հետագայում վերածվել է **Մրուն**-ի (**Մուրուն** > **Մրուն**. հմմտ. Խորձեան > Խորձին): Տես **Ինձիձեան Ղ.**, Ստորագրություն Հին Հայաստանայց: Մեծ Հայք, Կենտրոն-Սբ Ղազար, 1822, էջ 43: Հմմտ. նաև Քարմրուն (Քար+Մրուն) զույգ գյուղերը Օրոր գետի ստորին ավազանում:

62 Այս բնակավայրերը գտնվում էին Գայլգետի ստորին ավազանում (այդ հատվածում Բերի կամ Փերի) (տես **Հարությունյան Բ. Հ.**, Դերսիմ (բնակավայրերի քարտեզ 1915 թ. վիճակով): Հմմտ. **Badalyan G.**, Dersim en 1914):

դիրքով թեև Կոճակի տարածքում էին, սակայն թվարկման հաջորդականության խախտվելու պատճառով հայտնվել են Կեղիի այլ հատվածներում՝ **Սենեկն** (թրք. Zenikân, նաև՝ Zerigan < Սենեկան) և **Աղտաղտ** (նաև՝ Աղ-դատ, թրք. Ağdat)⁶³: Վերոհիշյալ գյուղերից Կտակը (Խասգեղ), Խոպակը (Խուպեկ), Խոլխոլքը (Խոլխոլ), Հարտիվը (Հերթև), Ագարակը (Ագրակ), Հարկապը և Պաղիննը ընդհուպ մինչև Հայոց ցեղասպանությունը պահպանել են իրենց ազգային դիմագիծը: Իսկ Հանձնիկը (Անզնիկ), Մրունը, Խարիկը, Սենեկնը և Աղտաղտը (Աղդատ) արդեն 1870-ական թթ. հայաթափվել էին:

դ) **Հանդերձ** («երկիրն Հանդերձու»): Կոնդակում հիշատակվող վերջին 8 բնակավայրերը սփռված էին Առյուծ լեռնագագաթի հյուսիսային ստորոտով հոսող Գայլգետի վերին ավազանում: Այդ խմբում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Հանդերձը, որը, փաստորեն, նույնանուն գավառակի (տես վերը) կենտրոնն էր: Այն համընկնում է գետի աջափնյակում գտնվող **Մելիքան** վերանվանված հայաբնակ ավանի հետ (թրք. Melikân), որը **Հանդերձ** > **Հանդրիս** վարչամիավորի կենտրոնն էր նաև 19-20-րդ դդ. (ի դեպ, գավառակը հայտնի էր նաև օտարահունչ երկրորդ անունով)⁶⁴: 18-րդ դարում Հանդերձը (Մելիքան) բավական բազմամարդ բնակավայր էր, Ղ. Ինժիճյանի տեղեկություններով՝ «գիւղաքաղաք»: Ուշագրավ է նաև, որ Մելիքանը տնտեսական կարևոր նշանակություն ուներ, քանի որ ընկած էր Տրապիզոնից Էրզրում, որտեղից էլ Կեղիի վրայով Դիարբեքի հասնող արդեն հիշատակված առևտրական ճանապարհի մոտ, ինչը հաշվի առնելով՝ Մելիքան էր տեղափոխվել պետական հարկահավաքը («Բաճ ժողովօղն»)⁶⁵: Միաժամանակ չենք բացառում, որ այն եղել է մելիքանիստ կենտրոն, որտեղից էլ առաջ է եկել երկրորդ՝ **Մելիքան** անվանումը⁶⁶: Ժամանակի ընթացքում թեև այն շրջանառությունից դուրս է մղել բնակավայրի հնագույն անվանաձևը, սակայն վերջինս լրիվ չէր մոռացվել, ավելին՝ որոշակիորեն աղձատված պահպանվել էր որպես գավառանուն:

20-րդ դարի սկզբին կար 2 Խարիկ՝ Վերին և Ներքին: Պաղինը, որը գտնվում էր Խարիկից շուրջ 15 կմ հարավ-արևմուտք, Պաղնատան միջնադարյան կենտրոնն էր, որտեղից էլ՝ գավառի անունը (տես **Երեմյան Ս. Տ.**, նշվ. աշխ., էջ 76-77):

63 Սենեկն գյուղը գտնվում էր Հարտիվից շուրջ 2 կմ արևելք՝ Սևդին լեռնագագաթի հարավային ստորոտին, իսկ Աղտաղտը Կոճակի հարավային մասում՝ Ագարակի (Ագրակ) հարավարևելյան անմիջական հարևանությամբ:

64 Տես **Коллюбакин А. М.**, նշվ. աշխ., т. III, ч. II, էջ 35:

65 Տես **Ինժիճյան Ղ.**, Ստորագրություն Հին Հայաստանեայց: Մեծ Հայք, էջ 109:

66 Բնակավայրի անվան Melikân օտար տարբերակը հուշում է նախնական Melikkând ձևը այնպես, ինչպես Բուլանուխի (Հարթ) Մոլլաքյանդ (Մալաքյանդ) գյուղանունը, որը տեղական խոսվածքում վերածվել էր **Մալաքյան-ի** (Գ. Բ.):

Ստույգ հայտնի է նաև **Ամառիձ** (գտնվում էր Գայլգետի հյուսիսային՝ աջ ափին), **Առինծ** (նաև՝ Արուզ, թրք. աղձատմամբ՝ Arnis)⁶⁷, **Շեն** և **Խուպ ձոր** (նաև՝ Խոփձոր, օտար աղձատմամբ՝ թրք. Humsor, քրդ. Xîmsôr. վերջին 3-ն ընկած էին գետի ձախափնյակում) բնակավայրերի տեղադրությունը: Դրանք մինչև 1915 թ. պահպանել են իրենց անվանումները, իսկ առաջին 3-ը՝ նաև ազգային դիմագիծը: Որոշ դժվարությունների ենք հանդիպում միայն **Կարմիր եկեղեցիք**, **Խուլմին** և **Խորթում** գյուղերը տեղորոշելիս, քանի որ Քղիի բնակավայրերի մեզ հասանելի հիմնական ցուցակներում⁶⁸ դրանք բացակայում են: Ամենայն հավանականությամբ, ժամանակի ընթացքում դրանք ամայացել են կամ, ինչպես վերն արդեն նշել ենք, վերածվել ոչ մշտական բնակչությամբ ագարակների⁶⁹: Հարցին զգալիորեն օգնում է հասու քարտեզագրական նյութը⁷⁰, որը հնարավորություն է ընձեռում լրացնելու այդ բացը: Այս առումով ցանկանում ենք ստորև փոքր-ինչ ավելի մանրամասն անդրադառնալ նշված գյուղերին:

- **Կարմիր եկեղեցիք:** Հիշվում է Ամառիձից անմիջապես հետո, ինչը թույլ է տալիս գյուղը նույնացնելու թուրքական պլանշետում վերջինից շուրջ 2 կմ հյուսիս նշված Ամառիձի մեզրե կամ **Վանք**⁷¹ ագարակի հետ:

- **Խուլմին:** Նույնացրել ենք թուրքական պլանշետում Գայլգետի ձախափնյա Շեն գյուղից շուրջ 2 կմ արևմուտք նշվող Kumin < Kulmin (?) բնակավայրի հետ:

- **Խորթում:** Նույնանում է Գայլգետի ձախափնյակում գտնվող Խորթումի գոմ⁷² բնակավայրի հետ:

- **Ապծեք:** Բնակավայրերի վերոհիշյալ խմբին ավելացրել ենք նաև **Ապծեք** գյուղը, որն աշխարհագրական դիրքով վերջինիս կազմում էր, թեև կոնդակում հիշվում է ի շարս Կեղի գավառակի գյուղերի: Ըստ այդմ՝ գյուղը նույնանում է թուրքական պլանշետում

67 **Առինծ** տեղանվան ծնափոխությունն է տեղական բարբառի ազդեցությամբ (Առինծ>Առիծ>Առինծ/Առինծ): Ի դեպ, նույն երևույթը հանդիպում է նաև հարևան Դերսիմում և Բալուում (հնմտ. Խոզաղբիւր>Խոզաղբի, Խլաղբիւր>Խլաղբիւր ևն):

68 Տե՛ս ՊԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին III, գ. 59, թ. 6ա-7ա, Տարեգիրք, էջ 3-7, **Колубакин А. М.**, նշվ. աշխ., տ. I, Կ. I, էջ 302-312, տ. III, Կ. II, Тифлис, 1890, էջ 9-26, 30-48 (Ա. Կոլուբակինն օգտագործել է նաև գեներալ Դեննետի նյութերը), «Вилает Эрзерум», Կ. I, составлен Генерального Штаба полковником М. Пржевальским, Тифлис, 1904, էջ 174-199:

69 Դրանք կոչվում էին մեզրե (Քղիի խոսվածքում «մրզան») կամ գոմ:

70 Տե՛ս ծանոթագրություն 5:

71 Ընդ որում չի բացառվում, որ Վանք տեղանունը Կարմիր եկեղեցիքի յուրատեսակ մեկնաբանությունն է:

72 Տե՛ս KKAT, IV-14. Кортунин-коми: Թրք. նաև Keşişkomu («տերտերի գոմ»): Նման տեղանուն (խոստում, ավելի ուշ՝ Դրտըմ < Դրդըմ) հանդիպում էր նաև հարևան Դերջանու (տե՛ս **Ռսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 22, **Սրվանձտյանց Պ.**, Երկեր, հատ. 2, Եր., 1982, էջ 492 (Պ. Սրվանձտյանցի տեղեկություններով՝ Դրդըմի ձորում կար 3 ավերակ մենաստան)): Ուշագրավ է, որ **Խորտունք** տարբերակով տեղանունը պահպանվել էր պատմական Տարոնում, Արածանուց հյուսիս՝ Խեյթյան ավանի մերձակայքում: Ավելի մանրամասն տե՛ս **Տեր-Կարապետեան Պ.** (Մշոյ Գեղամ), Տարոնի վանքերը: Ուղեւորի յիշատակներ, Եր., 2003, էջ 21):

նշված Hefşikân ազարակի հետ, որը գտնվում էր Գայլգետի ձախափնյակում (Ապծեք > Hefsikân > Hefşikân)⁷³:

Եզրակացություններ

Ելնելով վերոգրյալից՝ եկել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Խլբաշի (Ապարի կամ Առապարի) Սբ Կարապետի վանքի թեմը 15-րդ դ. վերջին քառորդին ընդգրկել է պատմական Ծոփքի Խորձյան գավառի գերագանցապես կենտրոնական և արևմտյան, ինչպես նաև հյուսիսարևմտյան շրջանները: Ընդ որում, 15-րդ դարի կեսերին թեմի իրավասությանը ենթակա տարածքը սահմանափակված էր Բալահովիտ գավառի հյուսիսային Օխու (Հոխու) շրջանից մինչև Առյուծնախազ լեռնաշղթա ընկած Կոճակ (Հարտիվի (Հերթև) հետ), Կեղի և Խասեր (ներառյալ՝ Տարմանի շրջանը) գավառակներով: Ավելի ուշ, երբ Սբ Կարապետին է անցել նաև Առյուծնախազից հյուսիս՝ մինչև Գայլախազուտ կամ Պախր լեռները տարածվող Հանդերձը («երկիրն Հանդերձու»), անհրաժեշտություն է առաջացել տեղ գտած փոփոխությունները լրացնելու նոր փաստաթղթում, որոնք արձանագրվել են 1475 թ.: Դրանով ենք բացատրում այն խառնաշփոթը, որն առկա է վավերագրում, ինչպես նաև կաթողիկոս Արիստակես Բ-ի ժամանակավրեպ ստորագրությունը:

- Վավերագրում նշված են 42 բնակավայրեր, այդ թվում՝ Խորձյանի Կեղի և Ապար գլխավոր կենտրոնները: Ընդ որում, բացառությամբ 2 գյուղերի՝ Խարիկ և Պաղին, մյուսները գտնվել են գավառի տարածքում:

- Մեր կարծիքով կոնդակում ակնառու են 1450-ական թթ. ողբերգական իրադարձությունների հետևանքները՝ կապված դարադոյունյունների ավերիչ արշավանքի հետ: Այդ պատճառով նշված տարածքում 1475 թ. հիշատակված է ընդամենը 40 բնակավայր: Նշենք, որ 20-րդ դարի սկզբին այստեղ կային ավելի քան 120 հիմնական գյուղեր և ոչ մշտական ազարակատիպ բնակավայրեր (մեզրե կամ գոմ): Հետևությունը միակն է՝ ժամանակի ընթացքում դրանց մի մասն այնուամենայնիվ վերաշինվել և կրկին բնակեցվել է:

- Խլբաշի Սբ Կարապետի վանքի կոնդակը կարևոր է նաև Հայաստանի պատմական ժողովրդագրությամբ զբաղվող մասնագետների համար, քանի որ որոշակի տեղեկություններ է հաղորդում

73 Ի դեպ, Քղիի տեղանուններում նկատելի է **ս-շ** անցում (հմտ. Շեֆքար (Şefkâr) < **Սևքար**, Շեյթան < **Սեյթան** կամ **Սեթեր** ևն): Հարևան Դերսիմում, ընդհակառակը, նկատելի է շջականների խլացում (շ-ս, չ-ց ևն):

15-րդ դ. կեսերին պատմական Խորձյանի տարածքում հայ բնակչության տեղաբաշխման մասին:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Կից ներկայացնում ենք 2 հավելվածներ, որոնք որոշակի պատկերացում են տալիս Խորձյանի (Կեղի/Քղի) էթնիկական պատկերի մասին մինչև 1915 թվականը:

Հավելված 1: Պատմական Խորձյանի (Կեղի/Քղի) հայաբնակ գյուղերը (19-րդ դ. 70-ական թթ. – 1914 թ.)⁷⁴

Ագրակ (Ագարակ), Ալթուն–Հուսեյին, Ալիյարան (Ավերան), Աղբզուտ (Ափխզուտ), Աղվուներ, Անատիճ, Առեք (Արեգ), Ապար (?), Առինձ (Առինձ < Առիձ), Ասողբերդ (Ասողաբերդ, թրք. Azakpert), Ապողնակ (Աղբինակ), Ավրդնիկ (Վարդենիք), Ափեվանք (Ափիպավանք), Բաշ-Չիֆթլիկ (Չուֆթլք), Գառնբերդակ (թրք. Gelinpertek), Դարման (Տարման, թրք. Temuran), Դրզնորի (< Դիցմարի/Դիցմորի), Զեյնըցիք (Զեյնալլու), Ընկուզիկ (Ընկըզնեկ), Ինախ, Լեք (Լըք), Լճիկ (Լծիկ), Խաչատուր, Խասագեղ (Կտակ), Խարաբեք, Խոլխու(ք), Խոշքար, Խորխոռ (Վ.Սևքար), Խուպեկ (Խուպակ), Խուփձոր (Խըմսոր), Խուփս, Ծաղկի, Ծերմաք (< Ճերմակ/Ջերմակ), Ծծվարս (թրք. Dizvaz), Հագստուն (Հանգստուն), Հարկապ, Հերթն (Հարտիվ), Հողաս (Հողեկ), Հողասի գումեր (Գմներ, Գոման), Դաբուռ (Գավառ), Դազի (Խագուգեղ), Դզըլչիբովս, Ճպրոգեղ, Մեկիբան (Հանդերձ), Մոզ (Ներքին), Մուսրում (Մուրսում), Շարուկ, Շեն, Չան (Ճան), Չանախչի (Չահանգչի), Չարիբաշ, Չելեբիմեզրե, Չումախ, Ջերման (Հանդրիսի Ջերման), Սագածոր (< Սահակածոր), Սեղանք, Սերկկիկ (Սերկկի), Տինեկ, Փառչեվանք (Բոնչիք), Քերբուս, Քղի/Կեղի գյուղաքաղաք, Քյունբեթ, Օսնակ (Հոսնակ, Խոսնակ), Օլմեգ, Օրոր:

Հավելված 2: Պատմական Խորձյանի (Կեղի/Քղի) հայանուն կամ երբեմնի հայաբնակ գյուղերը 1914 թ. (ըստ գավառակների)

Կեղի (Քղի). Ախորս (Ախոս), Բաղեշ, Բերդակ (Պայթակն, թրք. Pertek), Կոսանձոր (թրք. Giransor), Դաշտ (Դաշթիլ < Դաշտաթիլ), Զըխ (Ծեղ), Էլբակի (Վերին և Ներքին), Խարոր (Խարվոր), Խոզավիտ (Խոզովիտ), Խոզքաշի, Խուրս (Խորս),

74 Օգտվել ենք հետևյալ սկզբնաղբյուրներից. ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժին III, գ. 59, թթ. Յար (1877-78 թթ, պաշտոնական տվյալները), թթ. 7ա, 8ա (Վահան վարդապետ Պարտիզալցու 1878 թ. տեղեկագրից): Ա. Դ. Երիցով, Материалы для описания Турецкой Армении. I. Эрзерумский вилайет, Тифлис, 1884, էջ 101-104: «Вилайет Эрзерум», часть 1, составлен Генерального Штаба полковником М. Пржевальским, էջ 175-192: Եղիկեան, նշվ. աշխ., «Նոր Գեղի» ազգագրական հանդես, էջ 6:

Հոնիկ, Ղարաքիլիսա (Խարաքիլիսա), Չվառիձ (թրք. Süveric), Միատուն, Սելենք (Սերանիկ), Սզնուտ, Բերդարիզի (թրք. Bertelik), Քարմրուն (Քարմրուկ, Վերին և Ներքին), Օրիկ (Ուռեկ):

Խուրթուզի. Խոզան, Ջերման (< Ջերմա, Խուրթուզի Ջերմա, թրք. Çerme) Սևաք Ներքին:

Խորթի. Ավլեք (Ներքին և Վերին < Ավնիկ (?)), Բարգի (Բարկի), Գուռներ Էզենոր (Հեզենոր, Այզենոր), Ըրզանի (Էրզանի, Արծնի), Խորդ (Կորդ), Կեռվան (Գրռվան), Ղարաքյոմ (< Քարագոմ, Քարիգոմ), Մոզ (Մոզի, Ներքին և Վերին) Սլըփըռ (Մալաբուր):

Հանդրիս. Անգեղ, Ջոզանոս (Ջոզանոց), Խորթունի գոմի (Խորթոմ), Խուլմին (թրք. Kumin = Kulmin (?)), Հաֆշըքան (< Այծեք), Մուշաղա < Մուշեղա (Ներքին և Վերին), Ոսկենուտ (թրք. Üskünüd < Üskünüd), Վանք/Անատիճի մեզրե (Կարմիր եկեղեցիք):

Խարաբաշ-դարա. Ազնավեր (Ազնաֆեր<Ազնաբերդ), Ալաքիլիսա, Շևաք (Սևաք), Չոբան, Ջերման (< Ջերմա, Քարերու Ջերմա, թրք. Çerme), Միմխաչ (Մուրք Խաչ), Տափ (Դաք):

Մանջախ. Զաղ (Ջախ, Չագ (?)), Խուրթ (< Իծուտ, Ածուտ (?)), Խլբզուն (Խլբբզուն), Կորխ (Քյուրիկ), Շոխ (Շող), Միմսոր կամ Սեպձոր (Միվխոր), Օրորիկ (Խորխորիկ, թրք. Horhorik):

Խասեր. Բլուր, Դնլակ (Տնլակ), Թումիկ, Հաձելիս (թրք. Hacılyas), ձերմակքար (թրք. Aktas), Քիսնասոր (< Կաղամախաձոր):

Գագ (Կագ). Աղբաթան, Խուջախ (< Կոձակ), Ծմակ (Ջմթեկ), Կակվին, Կթան, Մողբեթ (Մողպետ< Մոզբերդ), Նորփութ (< Նորբերդ), Քամխուտ (< Կաղմխուտ), Քարսընի:

Կոձակ. Աղդատ (Աղտաղտ), Անզևիկ (Անծևիկ, Անձրևիկ), Բարգիսոր (< Բարկիձոր), Խարսակ (Էրեսք, Երեցք (?)), Խոփիկ, Հակ, Հաֆթառիձ (< Ավատառիձ), Հորեվանք (Հորիկ), Հոփ, ձոնակ, Մրուն (< Մորմրանս), Ջրաղբի (Ջրարբի), Վանք (թրք. Kilise):

Հերթև (Հարտիվ). Գոմիկդեդե (Կմեկ), Ջենըկան (< Սենեկն), Տոմ:

Խուրաղ. Զանգեվան(ք), Ջմթեկ (Ծմակ (?)), Թառռ (Մուրք Թորիկ), Հոփ:

Գեղամ Մ. Բաղայան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայաստանի պատմական աշխարհագրությունը, պատմական ժողովրդագրությունն ու քարտեզագրությունը:

Էլ. հասցե՝ gegham.badalyan@gmail.com

THE KONDAK OF 1475 OF ST. KARAPET MONASTERY OF KEGHI

As a primary source of historical geography of Armenia

Gegham M. Badalyan

Candidate of Sciences in History

Key words – Khordzyan, Keghi (Qghi), St. Karapet of Khlbash, Aryuts Peak, Aryutsnakhaz mountain range, Khurtuzi, Yokhu, Kotchak, Hertev (Hartiv), Handerdz, Surb Luys Mountain (Silpus), Apar (Arapar), Tarman (Darman), Handerdz (Melikan).

The kondaks of the monastic dioceses are remarkable sources of the historical geography and demography of Armenia. Despite the fact that we have received similar documents with sporadic examples, even in that case they contain such rare and important information that is missing in the works of Armenian chroniclers. Such a primary source is the 1475 kondak of famous Khlbash St. Karapet Monastery of Keghi (Khordzyan), which is housed in the Middle East Fund of the Campus Research Library of the USA University of California, along with thousands of printed books, manuscripts and archival documents in various languages donated by Dr. Karo Owen Minasyan, a well-known Isfahan philanthropist.

The monastery was located about 5 km north of Keghi or Kghi (historical Koghoberd) borough – the center of Khordzyan, on the left bank of the Gaylget tributary of Aratsani, near the former fortress town of Apar (Arapar) by whose name it was called Getahayatz St. Nshan or Hangstuni St. Karapet). As early as the Late Middle Ages, the province was divided into about two dozen cantons or village groups. At that, in the middle of the 15th century, as indirectly suggested by the facts recorded in the kondak, the territory under the jurisdiction of the Diocese of St. Karapet Monastery of Khlbash (Apar or Arapar) was limited from the northern Okhu (Hokhu) canton of Balahovit province of Tsopk to the Aryutsnakhaz mountain range including the main central and western regions (Kotchak with Hartiv-Hertev, Keghi and Khaser (including Tarman region) cantons).

Later, when the northwestern Handerdz canton (“the land of Handerdz”) of Khordzyan also passed to St. Karapet, through which the diocesan borders reached from the Aryutsnakhaz to the Gaylakhazut or Pakhr mountains, it became

necessary to introduce new changes from a “legal” point of view which was recorded in the 1475 kondak. The latter also contains information about the boundaries of the diocesan territory of St. Karapet Monastery, which, however, are recorded in a “hidden” form. This explains some of the confusion in the document, including the outdated signature of Catholicos of All Armenians Aristakes II (1465-1469). The document mentions Keghi and Apar – the main centers of Khordzyan, as well as 40 villages, only 2 of which were located in the neighboring Paghnatun canton.

By the way, the document also contains the consequences of the tragic events of 1453, which were related with the destructive invasion of Sultan Jahan Shah of the Kara-Koyunlus, when the historical territory of Khordzyan was looted and deserted. That was the reason that the number of settlements mentioned in the document is three times less than the number of main villages and non-permanent agricultural settlements (“mezre” or “gom” (barn)) found in the same area at the beginning of the 20th century.

The kondak of St. Karapet of Khlbash is important for specialists in the historical geography and demographics of Armenia, as it provides some information about the settlement of the Armenian population in the historical Khordzyan area (which in the 15th century was divided between Keghi and Kotchak cantons). Attached are two appendices that give some idea of the ethnic image of historical Khordzyan up to 1915.

Резюме

КОНДАК 1475 Г. МОНАСТЫРЯ СВ. КАРАПЕТА В КЕХИ
 Как первоисточник по исторической географии Армении

Гегам М. Бадалян

Ключевые слова - Хордзян, Кехи (Кхи), монастырь Св. Карапета Хлбаши, горная вершина Арьюц (Лев), горная стена Арьюцнахаз, Хургузи, Йоху, Хертев (Хартив), Хандердз, гора Сурб Луйс (Сэлпус), Апар (Арапар), Тарман (Дарман), Хандердз (Меликан)

Кондаки монастырских епархий являются заслуживающими внимания первоисточниками по исторической географии и этнографии Армении.

Несмотря на то, что до нас дошли редкие экземпляры подобных документов, в них зафиксирована исключительно важная информация, которая отсутствует в армянских летописях.

Одним из таких первоисточников является Кондак 1475 г. известного монастыря Св. Карапета в Хлбаше, Кехи (Хордзян), который хранится в США, в Научно-исследовательской библиотеке Фонда Ближнего Востока Калифорнийского университетского поселка в числе многих печатных книг, рукописных журналов и архивных документов, подаренных известным благодетелем, доктором Каро Овен Минасяном из Исфакана.

Монастырь располагался в центре провинции Хордзян, примерно в 5 км к северу от села городского типа Кехи, или Кхи (истор. Когоберд), на левом берегу притока Арацани – Гайлгет, недалеко от города-крепости Апар или Апар (Арапар), в честь которого он и был назван Апару или монастырь Арапару (известный также как монастырь Св. Ншана в Гетаате или Св. Карапета в Ангстуни).

Уже в позднее Средневековье провинция была разделена примерно на два десятка волостей. Причем, в середине XV века, как косвенно подтверждают факты, приведенные в Кондаке, территория, находящаяся под юрисдикцией епархии Св. Карапета в Хлбаше (Апар или Арапар), была ограничена территорией, пролегающей между северной волостью Оху (Хоху) провинции Балаовит гавара Цопк и горным хребтом Арьяцнахаз, и включала в себя основные центральные и западные районы Хордзяна (в том числе область Кочак вместе с волостями Хартив-Херт, Кеги и Хасер (в том числе Тарманский район)).

Позже, когда монастырю Св. Карапета отошла также северо-западная волость Хордзяна – Хандерц («страна Хандерц»), из-за чего епархиальные границы от села Арьяцнахаз переместились к горам Гайлахазут и Пахр, возникла необходимость провести изменения с «юридической» точки зрения, что было запротоколировано в Кондаке 1475 г. Последний также содержал информацию о епархиальной территории монастыря Св. Карапета и ее границах, которые, однако, были «замаскированы». Этим объясняется тот хаос, о котором говорится в рассматриваемом нами документе, в том числе, и просроченная подпись Католикоса всех армян Аристакаеса II (1465-1469).

В документе отмечены главные районные центры Хордзяна – Кехи и Апар, а также 40 деревень, из которых только 2 находились на территории соседней провинции Пахнатун. Кстати, в документе также отражены последствия трагических событий 1453 г., связанные с разрушительным походом султана государства Кара-Коюнлу – Джаханшаха, в результате которого,

населенные пункты территории исторического Хордзяна были подвержены грабежу и опустошению. Поэтому упомянутое в документе число населенных пунктов в три раза меньше числа основных деревень и населенных пунктов фермерского типа («мезре» или «гом»), располагающихся на этой территории в начале XX века.

Кондак монастыря Св. Карапета имеет важное значение для специалистов, занимающихся исторической географией и этнографией, т.к. содержит в себе важную информацию о расселении армянского народа, проживающего на территории исторического Хордзяна (в XV веке эта территория была разделена между провинциями Кехи и Кочак). Два приложения к статье содержат сведения, дающие в определенной степени представление об этнической картине исторического Хордзяна до 1915 г.

REFERENCES

1. “Genocid armjan v Osmanskoj imperii”, Jer., 1983 **(In Russian)**.
2. “Hayastann est “Ashkharhats‘oyts’-i”, masshtab` 1:2300000, heghinak` **Harut‘yunyan B. H.**, “Hayastani azgayin atlas”, hat. B, Yer., 2008 **(In Armenian)**.
3. “K‘ghii vichakē”, “Drōshak”, Zhnew, 1896, N 16 **(In Armenian)**.
4. “Manr zhamanakagrut‘yunner: XIII-XVIII dd.”, hat. II, Kazmets‘ **V. A. Hakobyan**, Yer., 1956 **(In Armenian)**.
5. “Mayr ts‘uts‘ak dzeragrats‘ Srbots‘ Yakobeants’”, hat. 5. Kazmets‘ **Norayr yeps Pogharean**, Yerusaghēm, 1971 **(In Armenian)**.
6. “Taregirk‘. A”, hratarakut‘iwn K‘ghii hayrenakts‘akan miut‘ean, Tit‘royit‘, 1937 **(In Armenian)**.
7. “Vilajet Erzerum”, chast‘ 1, sostavlen General‘nogo Shtaba polkovnikom M. Przheval‘skim, Tiflis, 1904 **(In Russian)**.
8. “Zhamanakagrut‘iwn Step‘annosi Ōrbēleani”, Hratarakut‘yan hamar patrastets‘ patm. git. t‘eknatsu **Ash. Abrahamyanē**, Yer., 1942 **(In Armenian)**.
9. “ZHYE d. hayeren dzeragreri hishatakaranner”, masn yerkrord (1451-1480), kazmets‘ L. S. Khach‘ikyan, Yer., 1958 **(In Armenian)**.
10. “ZHYE d. hayeren dzeragreri hishatakaranner”, masn yerrord (1481-1500 t‘t‘.), kazmets‘ L. S. Khach‘ikyan, Yer., 1967 **(In Armenian)**.
11. **Acharean H.**, Hayerēn armatakan bařaran, hat. B, Yer., 1973 **(In Armenian)**.
12. **A-Dō**, Vani, Bit‘lisi yev Ērzurmi vilayet‘nerē, Yer., 1912 **(In Armenian)**.
13. **Adonts‘ N.**, Hayastanē Hustinianosi darashrjanum: K‘aghak‘akan kats‘ut‘yunē est nakhararakan kargerı, Yer., 1987 **(In Armenian)**.
14. **Arsēn**, K‘ghii himnarkut‘enēn I ver, “Biwzandion”, K. Pōlis, 1899, N 782 **(In Armenian)**.
15. **Badalyan G. M.**, Taroni S. Hovhannesi (Yeghrduti) vank‘i 1445 t‘vakani kondakē (patma-ashkharhagrakan aknark), “Ējmiatsin”, S. Ējmiatsin, 1997, N ZH, ēj 88-105 **(In Armenian)**.
16. **Hakobyan T‘. Kh., Melik‘-Bakhshyan S. T., Barseghyan H. Kh.**, Hayastani yev harakits‘ shrjanneri teghanunneri bařaran, hat. A, Yer., 1986 **(In Armenian)**.
17. **Harut‘yunyan B. H.**, Dersim (bnakavayreri k‘artez 1915 t‘. vichakov), “Hay azgagrut‘yun yev banahyusut‘yun: Nyut‘er yev usumnasirut‘yunner”, prak 5, Yer., 1973 **(In Armenian)**.

18. **Harut'yunyan B. H.**, Hayastann ěst "Ashkharhats'oyts'"-i yev ayl aghbyurneri, k'artez, Yer., 2001 (**In Armenian**).
19. **Inchichean Gh.**, Ashkharhagrut'iwn ch'orits' masants' ashkharhi, masn arajin, hat. A, Venětik, S. Ghazar, 1806 (**In Armenian**).
20. **Jericov A. D.**, Materialy dlja opisaniya Tureckoj Armenii. I. Erzerumskij vilajet, Tiflis, 1884 (**In Russian**).
21. KHSHM Zinvats uzheri k'artez, planshet J-37-05 (**In Armenian**).
22. **Koljubakin A. M.**, Materialy dlja vojenno-statisticheskogo obozrenija Aziatskoj Turcii, t. I, ch. I, Tiflis, 1888 (**In Russian**).
23. **Koljubakin A. M.**, Materialy dlja vojenno-statisticheskogo obozrenija Aziatskoj Turcii, t. III, ch. II, Tiflis, 1890 (**In Russian**).
24. Kopija tureckoj karty Aziatskoj Turcii, izdannoj v masshtabe 1:200 000 v 1330 godu Gidzhry, t.je. v 1911-12 godax, [Tiflis], 1915-1917, IV-14 (masshtab` 1:210 000) (**In Russian**).
25. **P'avstos Buzand**, Hayots' patmut'yun (grabar yev ashkharhabar tek'sterov), Yer., 1987 (**In Armenian**).
26. **P'irghalěmean Gh.**, Nětark' Hayots', a. t'. (**In Armenian**).
27. **Poghikean S.**, T'ěmran tsndavayrs, Frězně, 1974 (**In Armenian**).
28. **Srapean L.**, K'ghi (teghagrakan yev azgagrakan), Ant'illas, 1960 (**In Armenian**).
29. **Srvandztyants' G.**, T'oros aghbar, masn B, K. Polis, 1885 (**In Armenian**).
30. **T'ěk'at' Y.**, Awerak K'ghin, Stambul, 2015 (**In Armenian**).
31. **Voskean H.**, Bardzr Hayk'i vank'erě, Vienna, 1951 (**In Armenian**).
32. Ye. Ch'arents'i anv. grakanut'yan yev arvesti t'angaran, T'. Azatyani fond, g. 59 (**In Armenian**).
33. **Yeghikean A.**, Ashkharhagrakan hamarět gtser, "Nor Geghi" azgagrakan handěs, Pěyrut', 1964, A mas (**In Armenian**).
34. **Yeremyan S. T.**, Hayastaně ěst "Ashkharhats'oyts'"-i (p'ordz VII dari haykakan k'artezi verakazmut'yan zhamanakakits' k'artezagrakan himk'i vra), Yer., 1963 (**In Armenian**).